ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 հոկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

135
(2985)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԱՎԱՌԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՏԵՂԻՑ ՏԵՂ ԵՆ ՏԱՆՈՒՄ

ՀՀ առողջապահության ոլորտը ամեն նոր նախարարի հետ կոռուպցիոն նոր գործերի էպիկենտրոն է դառնում:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ 2021 թվականին Գավառ ԲԿ-ի եւ Գավառի հիվանդանոցի վերամիավորման պրոցես սկսվեց, իսկ 2022 թվականին երկուսը միասին դարձան մեկ միավոր՝ Գավառի բժշկական կենտրոն: Ավելի հասկանալի եթե բացատրենք, Գավառի պոլիկլինիկան, որը սպասարկում է արդեն Գավառ խոշորացված համայնքի 61 հազար 904 մարդու, միացվեց Գավառի հիվանդանոցին: Միավորումից որոշ ժամանակ անց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հենց Գավառում հայտարարեց, որ «Գավառի պոլիկլինիկայի վերանորոգման աշխատանքներ ենք իրականացնում պետական ծրագրով»: Հենց այս հայտարարությունից հետո պոլիկլինիկայի անձնակազմին շենքից հանեցին եւ տեղափոխեցին Գավառի հիվանդանոցի ինֆեկցիոն բաժանմունք, իսկ ինֆեկցիոն բաժանմունքը սկսեց գործել մանկական բաժանմունքում: Ակնհայտ է՝ անթույլատրելի եւ անհամապատասխան գործողություններ են ծավալվել, քանի որ բազմաթիվ իրավական նորմեր են խախտվել: Այս երեւույթը կոչվում է «չլիցենզավորված գործողություն»:

2023 թվականի հունվարին Գեղարքունիքի մարզ կատարած այցի ժամանակ ՀՀ առողջապահության նախարարը մարզպետ Կարեն Սարգսյանի հետ հայտարարում է, որ 2023 թվականի ապրիլից մեկնարկում է Գավառի պոլիկլինիկայի կառուցումը: 2024 թվականի ամռանը ՀՀ առողջապահական տեսչական մարմինը տարեկան ստուգում է անցկացնում Գավառի պոլիկլինիկայում: Նախարարությունը, հասկանալով, որ տեսչական մարմինը որոշ խնդիրներ կնկատի, պոլիկլինիկայի աշխատակիցներին նորից հետ է տանում եւ տեղավորում է կրկին Գավառի պոլիկլինիկայի շենքում: Արձանագրենք, որ որեւէ վերանորոգում այդպես էլ չիրականացվեց, եւ այս հարցը մնաց օդում կախված: Ինչպես հայտնում են մարզի բնակիչները՝ հիվանդանոցի կողքին տարածք են նախատեսում Պոլիկլինիկա կառուցելու համար, ոչ թե նախկին շենքը վերանորոգելու:

Այսպիսով՝ մեկ-երկու տարվա ընթացքում 2-ից 3 անգամ փոխվեցին նախարարության որոշումները, իսկ թե երբ կկառուցվի կամ կվերանորոգվի Գավառի կլինիկան, հարցական է:



Նիկոլ Փաշինյանը խուսափում է պատասխանատվությունից: Նա չի ստորագրում Հայաստանի համար վճռորոշ իրավական որեւէ փաստաթուղթ: Այսպիսով, սեպտեմբերի 26-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում էր հրապարակել, որ Հայաստանի եւ հանձնաժողովի կանոնակարգը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Պարզվում է, որ այս կարեւոր փաստաթուղթը մի շարք խախտումներով եւ ոչ պատշաճ ընթացակարգով է գործադիրից հասել Սահմանադրական դատարան: «Սահմանադրական դատարանի» մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը հստակ սահմանում է՝ «Դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված: Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով»: Այսինքն՝ կառավարության կողմից ՍԴ ուղարկված փաստաթուղթը (այս դեպքում խոսքը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման պետական հանձնաժողովի կանոնակարգի մասին է), պետք է ստորագրված լիներ վարչապետի կամ տվյալ պահին նրան փոխարինողի կողմից: Նիկոլ Փաշինյանը, սակայն, չի ստորագրել. այս փաստաթուղթը էլեկտրոնային ստորագրությամբ է ուղարկվել ՍԴ, ընդ որում՝ բացակայում է ձեւը, նմուշը եւ համարը: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ ՍԴ դատավոր Երվանդ Խունդկարյանը մինչ այս բոլոր պայմանագրերի մասով գրել է հատուկ կարծիք, որ ստորագրության բացակայության դեպքում դիմումները չպետք է քննվեն ՍԴ-ում: ՍԴ-ն չպետք է վարույթ ընդուներ, քանի որ փաստաթուղթը պատշաճ կերպով ստորագրված չէ: «Սահմանադրական դատարանի» մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետն էլ սահմանում է՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշումը եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ եւ 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ անհապաղ ուղարկում է կողմերին»: Պարզվում է, ՍԴ-ն, առանց պատշաճ ստորագրության ուղարկված փաստաթուղթը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման պետական հանձնաժողովի կանոնակարգը, ոչ միայն վարույթ է ընդունում, այլ մի բան էլ խայտառակ որոշում է կայացնում, թե իբր այն համապատասխանում է մայր օրենքին:



Ինչպե՞ս են դատական համակարգի հետ կապ չունեցող անձինք միանգամից հայտնվում համակարգի բարձր ատյաններում. երբեւէ դատավոր չաշխատած անձը ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր է նշանակվել: ՀՀ Սահմանադրական դատարանի փոխնախագահ Աշոտ Խաչատրյանի որդին՝ Հայկ Խաչատրյանը, դատական համակարգի հետ կապ չունենալով, 2023 թ. մայիսի 15-ին ՀՀ նախագահի հրամանագրով (միանգամից) նշանակվել է վերաքննիչ վարչական դատարանի դատավոր: Ուսումնասիրելով նրա կենսագրությունը՝ նկատեցինք, որ նա տարբեր պաշտոններ է զբաղեցրել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարն է եղել, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ է եղել, բայց զրո առնչություն՝ դատական համակարգի մասով: Եվ ահա, 2018 թվականի հեղափոխությունից հետո նա ՄԻՊ-ից կտրուկ «թռիչք» է կատարում դատական համակարգ ու 2023թ. մայիսի 15-ին նշանակվում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր: Դատական համակարգում տպավորություն կա, որ Հայկ Խաչատրյանի կարիերայի այդ կտրուկ թռիչքը կապված է այն հանգամանքի հետ, թե քաղաքական իշխանությանը ինչ «ծառայություններ» է մատուցել նրա հայրը՝ ՍԴ փոխնախագահ Աշոտ Խաչատրյանը: Նա ՍԴ-ում իշխանափոխություն արած գործիչն է՝ որպես ավագ դատավոր: Հենց նրա ստորագրությամբ Նիկոլ Փաշինյանի համար անցանկալի դատավորները ազատվեցին ՍԴ իրենց աշխատանքից, որպեսզի հեշտությամբ բոլոր խնդրահարույց հարցերը սահմանադրական ճանաչվեն:

Լիբերալ քաղաքականության ինստիտուտը, որ երբեք մամուլի ազատության համար տեսանելի պայքար չի մղել, հիմա մամուլի սահմանափակման օրինագիծ է մշակում: Լիբերալ քաղաքացիական ինստիտուտի հիմնադիրը ԼՀԿ նախագահ, հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանի կինն է՝ Տաթեւիկ Մատինյանը: Երեկ Երեւանի մամուլի ակումբի հետ համագործակցությամբ ԼՔ ինստիտուտը կազմակերպել էր հանրային քննարկում՝ տեսալսողական մեդիայի կարգավորումների մասին: Ի սկզբանե տեղեկացնենք, որ քննարկումն իրականացվում էր «Խթանել թափանցիկ եւ վստահելի մեդիայի զարգացումը Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: ԼՔ ինստիտուտի նպատակն է քննարկման արդյունքում մշակել օրենսդրական փաթեթ: Քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ Լիբերալ քաղաքականության ինստիտուտը, որը գրեթե որեւէ կապ չունի լրագրության եւ ԶԼՄ գործունեության հետ, փորձում է դրամաշնորհով օրենսդրական բարեփոխումների փաթեթ մշակել, որը ձեւակերպումներով կպայքարի ատելության խոսքի դեմ, իսկ իրականում համացանցային ազատ խոսքը լրջագույնս կսահմանափակի: Բայց փաթեթավորումը գեղեցիկ է անշուշտ: Ինստիտուտը մտադիր է վերահսկել ատելության խոսքի դրսեւորումները ՀՀ ԶԼՄ-ներում եւ խախտումների դեպքում, որպես պատիժ, նախատեսելու է տուգանք, որի չափը դեռ հստակ սահմանված չէ: Պարբերաբար խախտելու դեպքում տուգանքին կարող է փոխարինել անգամ լրատվամիջոցի գործունեության դադարեցումը: Բայց ինչպես է վերահսկելու՝ չգիտեն անգամ իրենք:

ԼԻԲԵՐԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

ԱՏՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ Է ԿԱՊՎԱԾ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Այս իշխանություններն ատում են այն ամենը, ինչ կապված է Հայաստանի հերոսական անցյալի եւ ղատմություններ-ի հետ: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտարարել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

Պատգամավորը նաեւ չի բացառում, որ Ադրբեջանի պահանջով Հայաստանում արցախյան պատերազմի մասնակիցները քրեական պատասխանատվության ենթարկվեն:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը.

-Պարոն Աբրահամյան, նախորդ շաբաթ՝ կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ մի շարք աղմկահարույց արտահայտություններ հնչեցրեց: Անդրադառնանք դրանցից մեկին: Նա նշեց, որ Արցախը մշտապեղ թոկ է եղել Հայաստանի վզին, որից իր շնորհիվ Հայաստանի Հանրապետությունը վերջապես ազատվեց: ԵՎ մեղադրեց իշխանությանը՝ նշելով. «Դուք հիմա փորձում եք մեզ շեղել խաղաղության օրակարգից եւ ստիպում եք, որ Հայաստանն այդ թոկը իր վզին փաթաթի»՝ նկատի ունենալով Արցախը: Ի՞նչ էր ցանկանում ասել Նիկոլ Փաշինյանը, արդյո՞ք Արցախն իսկապես տարիներ շարունակ՝ հակառակ, որ մեր տղաները կռվել ու պահպանել են մեր անկախությունը, թոկ էր մեր վզին եւ խանգարում էր մեր անկախությանը:

-Նախ, ձեւակերպումները, որոնք այս կամ այն դեպքերում օգտագործվում են Արցախի եւա արցախցիների մասին խոսելիս, խիստ անընդունելի են, ինքնին: ԵՎ երկրորդը՝ այն, որ իշխանությունը փորձում է Արցախի հարցը ներկայացնել, որպես հնարավոր ռազմական գործողությունների վերսկսման առիթ, ապա դրա մասին չի կարող խոսել մի իշխանություն, որի ղեկավարը դեռեւս 2019 թվականին Արցախի կենտրոնական՝ Վերածննդի հրապարակում հայտարարում էր. «Արցախը Հայաստան է եւ վերջ»: Այսինքն մադ, որը դեռեւս հինգ տարի առաջ նման արտահայտություն է թույլ տվել, որեւէ բարոյական եւ քաղաքական իրավունք չունի ընդդիմությանը, որեւէ ուժի մեղադրելու Արցախի թեման բորբոքելու եւ Հայաստանի Հանրապետության դեմ ոտնձգության որեւէ առիթ ստեղծելու համար:

Բացի այդ, նույն այդ իշխանությունն էր, որը իր ծրագրերում՝ թե՛ նախընտրական, թե՛ քաղաքական ծրագրերում, ազգային անվտանգության ռազմավարության մեջ, երբ այն վերանայվեց, Արցախի հարցը դիտարկում էր, որպես ինքնորոշման իրավունքի տեսանկյունից լուծվող հարց: Հետեւաբար Արցախի թեման բերել եւ այս ձեւով ներկայացնելը ցույց է տալիս այս իշխանության սնանկությունը, անբարոյականության այն մեծ «դոզան», որն առկա է իշխանական գործիչների մոտ՝ թեման մոլորեցնելու եւ ցանկացած պահի իրենց հարմար կերպով ներկայացնելու համար: Ի դեպ այն, որ Արցախի թեման որոշակի սրացումներ է առաջացնում Ադրբեջանում, կրկին ուղիղ կապված է այս իշխանության արտաքին քաղաքական կուրսի հետ, որը ո՛չ միայն չի հասել իր առջեւ դրված նպատակներին, այլեւ դրա տապալման պատճառով մեր երկիրը բերել շատ ավելի թիրախավորված իրավիճակի առջեւ կանգնեցրել:

-Այս օրերին միջազգային դերակատարներ, ինչպիսիք են օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, իրենց հայտարարություններում պարբերաբար շեշտում են, որ շատ կարեւոր է Արցախի ժողովրդի վերադարձը հայրենիք: Թեեւ անվտանգության երաշխիքների մասին խոսք չկա, բայց կան հայտարարություններին, որին հակառակ հայկական կողմն ասում է, որ արցախցիների վերադարձը անիրատեսական է: Ըստ ձեզ դա կարո՞ղ է պայմանավորված լինել ադրբեջանական կողմի ճնշմամբ:

-Հայաստանի այն իշխանությունը, որն Արցախը համարում է ադրբեջանական տարածք բնական է, որ բազմաթիվ հարցերում իր դիրքորոշումը նման պիտի լինի Թուրքիայի եւ Ադրբեջանի տեսակետի հետ: Իսկ արեւմտյան պետությունների հայտարարությունները խոսում են նրա մասին, որ միջազգային իրավունքի տեսանկյունից այս հարցը առնվազն քննարկելի է: Սակայն դա անթույլատրելի է ՀՀ իշխանությունների համար, քանի որ ադրբեջանական կողմի հետ որոշակի պայմանավորվածություններ ունեն, ամենայն հավանականությամբ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ

ԻՆՉ Է ԵՂԵԼ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՑԱԴՈՒԼԻ ԺԱՄԱՆԱԿ

Այժմ ապօրինի կերպով Ադրբեջանի բանտում գտնվող Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի փաստաբանները հինգշաբթի օրը հայցեր են ներկայացրել Բաքվում՝ նշելով, որ նա խոշտանգումների է ենթարկվել եւ զրկվել է արագ դատաքննության իրավունքից, հաղորդում է Reuters-ը:

Վարդանյանի փաստաբաններն ընդգծել են, որ հայցի հետ կապված դեպքերից մեկը 2024 թվականի ապրիլին նրա հացադուլի ժամանակ խոշտանգումներն են: Նրանք հայտարարել են, որ սրան ի պատասխան Վարդանյանին տեղափոխել են պատժախուց, ստիպել են կանգնել, արգելել են լվացվել եւ երկու օր զրկել են ջրից:

Մեկ այլ հայցում Վարդանյանի փաստաբանները նշել են, որ նրա արագ դատաքննության իրավունքը խախտվել է անցյալ տարվանից՝ նրա կալանավորման պատճառով:

Առանձին հայցով մեղադրանք է առաջադրվել ադրբեջանական «Բաքվի աշխատավոր» ռուսալեզու թերթին, որը զրպարտություն է տարածել Ռուբեն Վարդանյանի հասցեին:

Իրենց հայտարարության մեջ Ռուբեն Վարդանյանի փաստաբանները նաեւ կոչ են արել Ադրբեջանին ազատ արձակել երկրում պահվող բոլոր ղարաբաղցի հայ գերիներին մինչեւ COP29 գագաթնաժողովի մեկնարկը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴՐԴՄԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթը արդեն հայտնել է, որ ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ, ՔՊ-ական պատգամավորները, Անդրանիկ Քոչարյանի գլխավորությամբ, ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի տարեկան նստաշրջանին մասնակցելու համար նոյեմբերի 21-26-ը կգործուղվեն Մոնրեալ՝ Կանադա:

Կանադա մեկնող պատվիրակությունը հերթական անգամ բաղկացած է բացառապես իշխանական պատգամավորներից՝ Անդրանիկ Քոչարյան, ով նաեւ ՆԱՏՕ ԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության ղեկավարն է, Արուսյակ Ջուլհակյան եւ Վահագն Ալեքսանյան, իսկ ընդդիմադիր պատգամավորները ընդգրկված չեն կազմում:

Նշենք, որ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակությունը բաղկացած է 4 անդամից, այդ թվում՝ ընդդիմադիր պատգամավոր կա կազմում:

Այսպիսով, ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակության անդամներն են՝

Անդրանիկ Քոչարյան - «Քաղաքացիական պայմանագիր»

Ջուլհակյան Արուսյակ -«Քաղաքացիական պայմանագիր»

Ալեքսանյան Վահագն - «Քաղաքացիական պայմանագիր»

Կրպեյան Ասպրամ - «Հայաստան» խմբակցություն

Բայց փաստացի, հերթական անգամ պատվիրակության ղեկավար Անդրանիկ Քոչարյանի որոշմամաբ, որը նա թելադրել է նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին, խորհրդարանական ընդդիմությունը ներկայացված չէ պատվիրակության կազմում եւ զրկված է կազմակերպության աշխատանքներին մասնակցելու իրավունքից:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ի հարցման ի պատասխան ԱԺ աշխատակազմից հայտնել էին, որ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանն է հրահանգներ տալիս ԱԺ աշխատակազմին, որ ընդդիմադիր պատգամավորներին զրկեն գործուղումներից կամ խորհրդարանական պատվիրակությունների աշխատանքներին մասնակցելուց:

ԱԼԻԵՎԸ ԿՐԿԻՆ ՍԱԴՐՈՒՄ Է

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Հայաստանին մեղադրել է, «մի կողմից, խաղաղության մասին խոսելու, մյուս կողմից՝ ինտենսիվ զինվելու մեջ».

«Զգուշացնում եմ Հայաստանին՝ դադարեցրե՛ք այս վտանգավոր խաղերը: Մի կողմից խոսում են խաղաղության մասին, ստում, մյուս կողմից՝ մասշտաբային սպառազինություն են գնում: Ո՞վ է նրանց զենք տալիս. Ֆրանսիան եւ հակաադրբեջանական այլ երկրներ: Ինչու՞ են այդ զենքերը նրանց անվճար տալիս: Որքան էլ փորձեն, ոչինչ չի ստացվի: Այսօր նրանք պետք է հանգիստ թողնեն Հարավային Կովկասը, հանձնվեն, գնան ու զբաղվեն իրենց գործերով»,- ասել է նա:

Ալիեւը նաեւ հայտարարել է. «Հայաստանը 44-օրյա պատերազմի ժամանակ ամենաբարձր մակարդակով դիմել է Ռուսաստանին՝ «օրական 10 անգամ խնդրելով պատերազմը կանգնեցնե: Նրանք մոռացել են դա»,- ասել է նա:

ԱՅՆՊԵՍ ԵՆ ԱՆՈՒՄ, ՈՐ ՀՀ-Ն ԴՈՒՐՍ ԳԱ ՀԱՊԿ-ԻՑ

Արեւմուտքը, սպառազինությունների արտոնյալ մատակարարումների եւ անվտանգության երաշխիքների դիմաց, փորձում է հասնել նրան, որ Հայաստանը դուրս գա ՀԱՊԿ-ից: Այս մասին գրում է ՌԻԱ «Նովոստի»-ն՝ մեջբերելով Ռուսաստանի ԱԴԾ տնօրեն, ԱՊՀ անդամ պետությունների անվտանգության գործակալությունների եւ հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահ Ալեքսանդր Բորտնիկովի խոսքերը:

«Արեւմուտքը, սպառազինությունների արտոնյալ մատակարարումների եւ անվտանգության երաշխիքների դիմաց, փորձում է հասնել նրան, որ Հայաստանը դուրս գա ՀԱՊԿ-ից, ինչը Երեւանին կդնի ՆԱՏՕ-ից ավելի մեծ կախվածության մեջ՝Բաքվի հետ հետագա հարաբերությունների հարցում: Եվ հաշվի առնելով աշխարհի տարբեր տարածաշրջաններում ՆԱՏՕ-ի միջնորդության ամբողջ նախկին փորձը, Անդրկովկասում դաշինքի համախմբումն ակնհայտորեն չի նպաստի տարածաշրջանում կայունությանը»,- նշել է Ալեքսանդր Բորտնիկովը:

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ

«Հայաստանը պետք է ցույց տա իր իրական հավատարմությունն արդարությանն ու հետկոնֆլիկտային խաղաղությանը՝ «պատժելով մեղավորներին»,- հայտարարել է Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը, գրում է APA-ն:

Հաջիեւն, ըստ էության, կրկնել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունն այն մասին, թե «եթե Հայաստանը խաղաղություն է ուզում, պետք է պատժի մեղավորներին»:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՎԱԾ Է

Գիշերը մերձավոր Արեւելքում կրկին լարված է անցել: Իսրայելը գիշերը շարունակել է ավիահարվածները Լիբանանի մայրաքաղաքում՝ թիրախավորելով «Հըզբոլլահ»-ին:

Իսրայելի պաշտպանության բանակը հայտնել է, որ Լիբանանի հարավում ութ զինվոր է զոհվել: Բոլոր սպանվածները 21-ից 23 տարեկան են:

Իսրայելական բանակն այսպիսով հաղորդում է հոկտեմբերի 1-ին իրանամետ «Հըզբոլլահ» խմբավորման դեմ ցամաքային գործողությունների մեկնարկից հետո իր առաջին կորուստների մասին:

Al Jazzera-ն հայտնում է, որ մի շարք երկրներ տարհանել են իրենց քաղաքացիներին Լիբանանից, քանի որ Իսրայելը ուժեղացնում է օդային հարվածները եւ ցամաքային ներխուժում է սկսել այդ երկիր: Վերջին շաբաթվա ընթացքում ավելի քան 1 միլիոն մարդ լքել է իր տունը:

Ռմբակոծության հետեւանքով Բեյրութի միջազգային օդանավակայանի մերձակայքում ուժգին պայթյուններ են տեղի ունեցել. այս մասին հաղորդում է BBC-ն:

Առայժմ հայտնի չէ, թե կոնկրետ ինչ էր թիրախավորում Իսրայելը, սակայն օդանավակայանը գտնվում է Բեյրութի հարավային Դահիե արվարձանի մոտ, որտեղ «Հեզբոլլահ»-ը մեծ ներկայություն ունի:

Լիբանանի առողջապահության նախարարությունը հայտնել է, որ վերջին 24 ժամվա ընթացքում Իսրայելի ցամաքային եւ օդային հարձակումների հետեւանքով զոհվել է 37 մարդ, 151 մարդ վիրավորվել է:

Ավելի վաղ Իսրայելի պաշտպանության բանակը եւս քսան գյուղերի բնակիչների հրահանգել էր տարհանվել Լիբանանի հարավից:

Հիշեցնենք, որ Իսրայելը սեպտեմբերի 23-ից ավիահարվածներ է հասցնում Լիբանանին, իսկ հոկտեմբերի 1-ից հայտարարել է այնտեղ ցամաքային գործողություն սկսելու մասին:

ԻՐԱՆԻ ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ՝ ԱՄՆ–ԻՆ

Իրանը Կատարի միջոցով ուղերձ է հղել ԱՄՆ-ին՝ ասելով, որ չի ձգտում տարածաշրջանային պատերազմի, սակայն միակողմանի ինքնազսպման փուլն ավարտվել է եւ իսրայելական ցանկացած հարձակում կարժանանա պատասխանի՝ ընդհուպ մինչեւ իսրայելական ենթակառուցվածքների թիրախավորում: Այս մասին հայտնում է Al Jazeera հեռուստաալիքը:

Հիշեցնենք, որ Իսրայելը եւ ԱՄՆ-ն խոստացել են պատասխանել Թեհրանի հարձակմանը՝ Իսրայելի վրա:

COP 29-ԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների շուրջ 60 անդամներ միացել են Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենք Փալոնի եւ սենատոր Էդ Մըրֆիի նամակին՝ կոչ անելով ԱՄՆ իշխանություններին COP 29-ին ընդառաջ պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին ռազմական հանցագործությունների, աղօրինի պատանդառության, Հայաստանի ինֆրաստրուկտուրայի բռնազավթման համար:

Մեկնաբանելով երկկուսակցական նամակը՝ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Չենթարկելով Ադրբեջանին պատասխանատվության Արցախի ցեղասպանական էթնիկ զտումների համար՝ համաշխարհային առաջնորդները պարտավոր են օգտագործել COP 29-ը որպես հնարավորություն՝ ուսումնասիրելու Ադրբեջանում մարդու իրավունքների վիճակը եւ դիմակայելու դրա ցեղասպան ռեժիմի ջանքերին՝ կանխելու իր պատերազմական հանցագործություններն ու վայրագությունները: Մենք արձագանքում ենք երկկուսակցական նամակում առաջ բերված պատասխանատվության կոչին եւ միանում վաթսուն օրենսդիրներին, ովքեր ստորագրել են այդ կոչը՝ պահանջելով, որ Ադրբեջանը պատասխանատվության ենթարկվի, որպեսզի Ալիեւի հանցավոր եւ կոռումպացված ռեժիմը ստիպված լինի ապահովել մարդու իրավունքներն ու միջազգային իրավական պարտավորությունները՝ մինչեւ COP 29 կլիմայական գագաթնաժողովը»:

Հոկտեմբերի 3-ին պետքարտուղար Էնթոնի Բլինքենին ուղղված նամակում ԱՄՆ սենատորներն ու ներկայացուցիչները մասնավորապես նշել են. «Քանի որ COP 29-ը մոտենում է, մենք պահանջում ենք, որպեսզի պետքարտուղարությունը ճնշում գործադրի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ Ադրբեջանի կառավարության վրա, որպեսզի շոշափելի միջոցներ ձեռնարկվի տարածաշրջանային խաղաղության, մարդու իրավունքների պաշտպանության եւ միջազգային օրենքներին եւ նորմերին հավատարմության պահպանման գործում»: Նրանք ընդգծել են՝ «չնայած ճնշող ապացույցներին եւ միջազգային դատապարտմանը՝ Ադրբեջանը, էթնիկ զտումների եւ այլ գործողությունների համար, չի բախվել բովանդակային հետեւանքների»:

Ամերիկյան օրենսդիրները պետդեպարտամենտին կոչ են անում նաեւ պահանջել բոլոր քաղբանտարկյալների, պատանդների եւ ռազմագերիների՝ներառյալ էթնիկ հայերի, անհապաղ եւ անվերապահ ազատ արձակում՝ COP29-ին ընդառաջ բարենպաստ դիվանագիտական միջավայր ունենալու համար:

ԱՄՆ սենատորներն ու ներկայացուցիչները հաստատել են՝ «Ադրբեջանի մահաբեր հարձակումը Լեռնային Ղարաբաղում 2020 թ., Լաչինի միջանցքի 10-ամսյա շրջափակումը եւ 2023 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում էթնիկ հայերի տեղահանությունը բացահայտորեն խախտում են միջազգային իրավունքը եւ շարունակում մարդկային տառապանքը: Նրանք շեշտում են. «Տեղահանված քաղաքացիական անձինք պետք է ապահով եւ անվտանգ վերադարձի իրավունք ունենան»:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը խորապես համոզված է՝ COP 29-ի գագաթնաժողովն աննախադեպ հնարավորություն է ընձեռում՝ ուսումնասիրելու Ադրբեջանի մարդու իրավունքների վիճակը, խրախուսելու պատասխանատվությունը ռազմական հանցագործությունների եւ մարդու իրավունքների ոտնահարման համար, ճնշում գործադրելու Ադրբեջանի վրա՝ բարեխղճորեն վերադառնալու բանակցությունների սեղան, երաշխավորելու ռազմագերիների ազատ արձակումը: Այդ ճնշումը կարող է նպաստել նաեւ Հայաստանի անվտանգությանն ու ինքնիշխանությունը, տեղահանված հայերի՝ իրենց տները վերադառնալու հիմնարար իրավունքի իրացմանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԿՄԱՄՆԱԿՑԵՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

ԱԺ պատվիրակությունը հոկտեմբերի 7-11-ը կգործուղվի Ֆրանսիա:

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորներ Նարեկ Զեյնալյանը, Լուսինե Բաղալյանը, Ռուստամ Բաքոյանը, Հրաչյա Հակոբյանը, Հռիփսիմե Հունանյանը, Արփինե Դավոյանը, Ալխաս Ղազարյանը, Մարինա Ղազարյանը, Տիգրան Պարսիլյանը եւ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Գեղամ Նազարյանը, Զեմֆիրա Միրզոեւան Ֆրանսիայի Ստրասբուրգ եւ Լիլ քաղաքներում կմասնակցեն «Կենսաբանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանություն II» ծրագրին:

ՀՀ-ՆԱՏՕ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային այցով Հայաստան ժամանած ՆԱՏՕ-ի միջազգային ռազմական շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Յանուշ Ադամչակի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 3-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում երկկողմ հանդիպումներ է ունեցել ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ՋՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանի ու ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության եւ միջազգային համագործակցության վարչության պետ Լեւոն Այվազյանի հետ:

Այս մասին հայտնում են ՀՀ ՊՆ-ից:

Հանդիպումների ընթացքում քննարկվել է հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության ներկայիս ընթացքին, զարգացման հնարավորություններին: Մատնանշվել են համագործակցության առավել նպատակահարմար ուղղությունները:

Հայկական կողմը ներկայացրել է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների ընթացքը: Քննարկվել են տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր, եւ կարծիքներ են փոխանակվել միջազգային ռազմաքաղաքական զարգացումների վերաբերյալ:

ՄԱՂԹԵԼ Է ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Բագրատ Սրբազանին հաջողություն եմ ցանկանում, եւ, որպեսզի ինքը հասնի այդ հաջողությանը, մի քանի նկատառում եմ հայտնում, ինչը մինչ այժմ չեմ ասել, որպեսզի դա չընկալվի որպես քննադատություն, կամ չուզողություն: Այս մասին facebook-ի իր էջում գրել է քաղաքագետ Ստեփան Դանիելյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Հարգելի՛ Սրբազան, չնայած արդեն բավականին ուշ է, այնուամենայնիվ, հրապարակային կերպով հայտարարեք Ձեր թիմի կազմն, անուն, առ անուն: Ովքեր են որոշումներ կայացնում, կազմի որ անդամը կազմակերպչական որ ուղղության համար է պատասխանատուն:

Եթե Ձեր միակ ռեսուրսը ժողովուրդն է, ապա ժողովրդի առջեւ պետք է լինեք բացարձակ թափանցիկ:

Ցանկացած իշխանափոխություն ենթադրում է նոր ընտրություն, նոր կառավարության կազմը:

Ներկայացրեք Ձեր կառավարության ստվերային կազմը, նախընտրական հնարավոր ցուցակը, եւ, վերջապես, Ձեր վարչապետի թեկնածուն:

Սա ընդունեք որպես ոչ թե քննադատություն, այլեւ որպես հաջողության հասնելու կարեւոր նախապայման:

Սա անհրաժեշտ քայլերի վերջը չէ, այլ ընդամենը սկիզբը: Մնացածը՝ հաջորդիվ, երբ այս քայլերն իրականացնեք:

Այս քայլերը պետք է ընդունել որպես մեթոդաբանություն եւ՝ նոր մշակույթ, ինչը ոչ միայն Սրբազանին է վերաբերվում, այլ բոլորին, ովքեր քաղաքականություն մտնելու հայտ են ներկայացնում:

Մեր միակ հաջողված նախագիծը եղել է «Ղարաբաղ Կոմիտեն», որտեղ պարզ էր որոշում ընդունողների կազմը, ոլորտների պատասխանատուների անուններն ու աշխատանքի ուղղությունները, տեղական կառույցների կազմը:

ԴԱՏԱՎՈՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ԿԱՐԴՈՒՄ Է ՀԵՌԱՑՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Բարձրագույն դատական խորհուրդը որոշեց ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին արդարացրած դատավոր Վահե Միսակյանին հեռացնել համակարգից:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Սերժ Սարգսյանի գործը քննող դատավոր Վահե Միսակյանի կարգապահական վարույթի շուրջ կրքերը թեժ են ԲԴԽ-ում: Ինչպես հայտնի է՝ դատավորի կարգապահականի վերաբերյալ որոշումը պետք է հրապարակվեր սեպտեմբերի 30-ին՝ երկուշաբթի, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ որոշման հրապարակումը ԲԴԽ-ն հետաձգեց եւ նշանակեց հոկտեմբերի 4-ին:

Դատական համակարգում խոսակցություններ են պտտվում, որ հետաձգման պատճառներից մեկն այն է, որ դատավորի հարցի շուրջ ԲԴԽ-ում թեժ խոսակցություններ են եղել, ու հնարավոր չի եղել որոշում կայացնել: Շատ դատավորների խոսակցություններ են հասել, որ որոշման հետաձգումը կապված է եղել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի մտերիմ ընկեր Գրիգոր Մինասյանի շուրջ ծավալված դեպքերի հետ, ու ԲԴԽ-ն վճռել է որոշումը հրապարակել ավելի ուշ՝ սպասելով, թե ինչպես կվարվի քաղաքական իշխանությունը Գրիգոր Մինասյանի հետ:

Արդյունքում, Մինասյանը լքեց համակարգը: Եվ ահա դատական համակարգում այն կարծիքին են, որ անկախ արդարադատության ոլորտում առկա քաոսից՝ ԲԴԽ-ն կդադարեցնի Միսակյանի լիազորությունները՝ ցույց տալով իր հավատարմությունը Նիկոլ Փաշինյանին:

Ինչպես հայտնի է՝ այս տարվա ընթացքում երկրորդ անգամ է դատավոր Միսակյանի դեմ կարգապահական վարույթ հարուցվում: Առաջին անգամ այս տարվա ապրիլի 24-ին Բարձրագույն դատական խորհուրդը, քննելով Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը՝ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Վահե Միսակյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որոշեց բավարարել այն. Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Վահե Միսակյանին հայտարարվեց խիստ նկատողություն:

Ըստ դատախազության հաղորդման՝ Վազգեն Մանուկյանի գործով, իբրեւ թե, դատավարական ժամկետների խախտում կար:

Դատելով իրավիճակից՝ երկրորդ վարույթը ճակատագրական ավարտ կունենա դատավորի համար:

Հավելենք, որ Վահե Միսակյանը Սերժ Սարգսյանին արդարացրած դատավորն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ՝ ԲԱՆՏԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Վանաձորի բանտում կալանավոր Արսյոմ Ղազարյանը կուլ է տվել մեխեր եւ բրիտվա, վիճակը ծայրահեղ ծանր է:



«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Քրեակատաողական ծառայության լրատվական բաժին, որտեղից ի պատասխան հայտնեցին.

«ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորած անձ Ա.Ղ.-ն սույն թվականի սեպտեմբերի 24-ից հայտարարել էր հացադուլ՝ համաձայն չլինելով իրեն առաջադրված մեղադրանքների հետ, եւ տեղափոխվել հացադուլ հայտարարած անձանց համար նախատեսված խուց: Հացադուլի ընթացքում կալանավորված անձը երկու անգամ հայտարարել է, որ կուլ է տվել մետաղական իրեր: Երկու դեպքում էլ անմիջապես ՔԿՀ է հրավիրվել շտապօգնություն, եւ կալանավորված անձ Ա.Ղ.-ն տեղափոխվել է Վանաձորի բժշկական կենտրոն: Համապատասխան հետազոտություններից հետո նա վերադարձվել է «Վանաձոր» ՔԿՀ, որտեղ գտնվել է քրեակատարողական ծառայողների ուշադրության կենտրոնում եւ Առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի անձնակազմի դինամիկ հսկողության ներքո: Հացադուլ հայտարարելու օրվանից «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների բաժնի մասնագետների կողմից կալանավորված անձի հետ իրականացվում են ամենօրյա անհատական եւ համալիր ընդունելություններ, տարվում են բացատրական եւ խորհրդատվական աշխատանքներ առողջությանը չվնասելու եւ իր բողոքն իրավական ճանապարհով արտահայտելու ուղղությամբ: Կալանավորված անձ Ա.Ղ.-ին այցելել են նաեւ այլ կառույցներից»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՆՉԻՑ Է ՍԿՍՎԵԼ ԱԿՈՒՄԲԻ ԿՌԻՎԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 27-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում:

«Արամե մյուզիք հոլ» ակումբից տղամարդ էին տեղափոխել հիվանդանոց:

Ոստիկանները ակումբում մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով ձերբակալել են Երեւանի բնակիչներ 51-ամյա Դավիթ Մկրտչյանին, 51-ամյա Վահե Եսայանին, 32-ամյա Ալբերտ Արեւշատյանին եւ 48-ամյա Արտաշես Աբրահամյանին:

Ա. Արեւշատյանը ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչ Էդգար Արեւշատյանի որդին է:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նշված միջադեպի գործով հայտնի ՌԴ-ում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչ Էդգար Արեւշատյանի որդին է ձերբակալվել, ապա ազատ է արձակվել:

Ազատ արձակվելուց հետո քննչական կոմիտեում վարույթ է նախաձեռնվել խուլիգանության ծեծի հատկանիշներով եւ մինչ օրս որեւէ անձի նկատմամբ քրեական հետապնդում չկա:

ԿՐԱԿՈՑ՝ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին՝ գիշերը, «ձախ սրունքի հրազենային վնասվածքով» Արարատի հիվանդանոց տղամարդու են տեղափոխել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ Սուրենավան գյուղի Երեւանյան խճուղում գտնվող գազալցակայանի տարածքում Ա. Ջ-ն եւ Ա. Պ-ն վիճել են եւ միմյանց հասցեին հնչեցրել հայհոյանքներ, որի ընթացքում Ա. Ջ-ն իր մոտ ապօրինի պահվող ատրճանակից կրակել է Ա. Ջ-ի ոտքին:

Ձեռնարկվում են միջոցառումներ Ա. Ջ-ին եւ զենքը հայտնաբերելու ուղղությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ վիճաբանողները հեռավոր ազգականներ են, նախկինում ունեցած տարաձայնությունների հետ կապված վեճը դարձել է կրակոցի պատճառ:

ԱՊՕՐԻՆԻ

Ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի քրեական հետախույզները ապօրինի թմրամիջոց պահելու, օգտագործելու եւ իրացնելու վերաբերյալ տեղեկությունն իրացրին սեպտեմբերի 30-ին: Երեկոյան ժամը 7-ի սահմաններում Ախուրյանի խճուղում նրանք ձերբակալեցին եւ բաժին ներկայացրին Սեւան քաղաքի բնակիչ երկու երիտասարդի, իսկ նրանց «Մերսեդես» մակնիշի մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք:

Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ: Հետագա գործողություններով իրավապահները Գյումրիում եւ քաղաքի մոտակայքում հայտնաբերեցին տեղադրված 55 փաթեթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 95 դեպք՝ որից 1-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՍՏԻԿԱՆԸ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՀԱՏԵԼ Է 11 ՀԱՃԱՐԵՆԻ

Տավուշի մարզի Բերդ համայնքի Իծաքար գյուղի բնակիչ, 1995 թվականին ծնված Դավիթ Հայկի Մարդանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի հունվարի 1-ից հունվարի 6-ն ընկած ժամանակահատվածում, «Հայանտառ ՊՈԱԿ»-ի Արծվաբերդի անտառտնտեսության տարածքից ապօրինի հատել է թվով տասնմեկ հատ հաճարենի տեսակի ծառեր՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 1 միլիոն 997 հազար դրամի վնաս: Դ. Մարդանյանը ունի միջնակարգ կրթություն, ամուսնացած չէ, նախկինում՝ չդատված, զբաղեցրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժնի ՊՊԾ դասակի ոստիկանի պաշտոնը, պաշտոնավարումը ժամանակավոր դադարեցվել է, 2020 թվականի հունվարի 6-ին հանդիսացել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 1-ին կուրսի սովորող: 2020թ. դեկտեմբերի 18-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է Դավիթ Մարդանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով եւ այդ հոդվածի սանկցիայով նրան դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով: Դատարանը վճռել է Դ. Մարդանյանի խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողել անփոփոխ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Դ. Մարդանյանի պաշտպանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, վերաքննիչ դատարանին խնդրելով բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռը, Դ. Մարդանյանին ճանաչել անմեղ ու արդարացնել, նշված պահանջը չբավարարելու դեպքում Դ. Մարդանյանի նկատմամբ նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քր. օր. 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառել: 2021թ. սեպտեմբերի 7-ին վերաքննիչ դատարանը որոշել է վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ դատավճիռը բեկանել եւ քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: 2022թ. փետրվարի 23-ին վճռաբեկ դատարանը որոշել է Դավիթ Մարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել: «Դատալեքս» տեղեկատվական համակարգը հայտնում է, որ այս քրեական գործով Տավուշի մարզի դատարանում դատական նիստեր են կայանում

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉ ԵՆ ԳՏԵԼ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե կարծում եք, որ մարդկությունը ուսումնասիրել է Երկրի յուրաքանչյուր սանտիմետրը, ապա դա այդպես չէ: Նույնիսկ 21-րդ դարում գիտնականներին հաջողվել է մի քանի հեղափոխական բացահայտումներ անել: Այս մասին հոդված է հրապարակել «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:



Կրուբերա քարանձավի խորքերը

Աբխազիայում գտնվող Կրուբերա-Վորոնյա քարանձավն առաջին անգամ հայտնաբերվել է 1960 թվականին, սակայն հետազոտողները սուզվել են ընդամենը 95 մետր: Ժամանակի ընթացքում քարանձավը շարունակվեց ուսումնասիրվել, եւ մինչեւ 2007 թվականը գիտնականները կարողացան իջնել 1710 մետր խորության վրա:

Խաղաղ օվկիանոսի հատակի ուսումնասիրությունը

2010 թվականին ամերիկացի օվկիանոսագետները, օգտագործելով էխոլոկացիայի տեխնոլոգիաները իրականացրել են Խաղաղ օվկիանոսի հատակի մանրամասն ուսումնասիրություն, հատուկ ուշադրություն դարձնելով Մարիանյան փողրակին՝ համաշխարհային օվկիանոսի ամենախոր կետին: Արշավախմբի արդյունքում պարզվել է, որ Մարիանյան փողրակով անցնում են չորս բարձր լեռնաշղթաներ, որոնցից յուրաքանչյուրի բարձրությունը հասնում է 2,5 կիլոմետրի:

Ենթասառցադաշտային Վոստոկ լիճը

2012 թվականին գիտական հանրությունը հաստատեց Վոստոկ լճի առկայությունը, որը գտնվում է Անտարկտիդայում սառույցի շերտի տակ: Այս լիճն հանդիսանում է ամենամեծը մայրցամաքի 145 ենթասառցադաշտային ջրային օբյեկտների մեջ: Լճի գոյության մասին հայտնի է եղել վաղուց, սակայն նրա գոյությունը վերջնականապես հաստատվել է միայն վերջերս: Վոստոկ լիճը, թաքնված է չորս կիլոմետրանոց սառույցի շերտի տակ մոտավորապես 15 միլիոն տարի առաջ, իրենից ներկայացնում է յուրահատուկ «ժամանակի պարկուճ», որը կարող է պարունակել ժամանակակից գիտությանը անհայտ միկրոօրգանիզմներ:

Մոլորակի ամենամեծ հրաբուխը

2013 թվականին Ճապոնիայից արեւելք ամերիկացի հետազոտողները հայտնաբերեցին Երկրի ամենամեծ հրաբուխը՝ Խաղաղ օվկիանոսի Շատսկի բարձունքի շրջանում: Նրանք պարզեցին, որ լավայի լայնածավալ նստվածքները, որոնք նախկինում վերագրվում էին մի քանի աղբյուրների, իրականում պատկանում են մեկ հսկայական վահանային հրաբխի:

Մեծ Գրենլանդական կիրճը

2013 թվականին Իտալիայից, Անգլիայից եւ Կանադայից գիտնականների միջազգային թիմը Գրենլանդիայի սառցաշերտի տակ հայտնաբերեց Երկրի ամենամեծ կիրճը՝ այն ձգվում է 750 կիլոմետր երկարությամբ, հասնում է 10 կմ լայնության եւ 800 մետր խորության:

Նոր կղզի Նոր Երկիր կղզում

2020 թվականին Նոր Երկիր արշիպելագի հյուսիսային մասի մոտ նոր կղզի է հայտնաբերվել: Այն հայտնաբերել են ռուս դպրոցականները՝ արբանյակային պատկերների վերլուծության ժամանակ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ կղզին ունի 200 x 410 մետր չափսեր, բարձրությունը՝ մինչեւ 27 մետր եւ զբաղեցնում է մոտ 5,6 հեկտար տարածք: Ենթադրվում է, որ կղզին առաջացել է հալվող Հարավային Վիլկիցկի սառցադաշտի եւ Հյուսիսային կղզու միջեւ սառցե կամրջի փլուզման հետեւանքով:

Հայտնաբերվել է Երկրի մագնիսական բեւեռը

2020 թվականին ռուս գիտնականները պարզել են Երկրի մագնիսական բեւեռների ճշգրիտ դիրքը, որոնք, ի տարբերություն աշխարհագրական բեւեռների, ունակ են տեղաշարժվել: Նրանք հայտնաբերեցին, որ Հյուսիսային մագնիսական բեւեռն այժմ 3000կմ հեռու է գտնվում աշխարհագրական հարավային բեւեռից՝ ավելի մոտենալով Անտարկտիդայի եզրին:

Կարստային «խորտակիչ» Չինաստանում

2022 թվականին Չինաստանում, Պինե գյուղի Գուանսի Չժուան ինքնավար շրջանի տարածքում, կարստային հսկայական դատարկություն է հայտնաբերվել, որի չափսերը կազմել են 306մ երկարություն, 150մ լայնություն, 192մ խորություն, իսկ ծավալը գերազանցել է 5 000 000մաը: Այս եզակի կառուցվածքի ներսում, որը ներառում է երեք քարանձավ, հայտնաբերվել է հնագույն անտառ, որտեղ աճում են թզենիներ եւ 40 մետր բարձրությամբ փշոտ լիաններ:

Անտարկտիկայի ենթասառցադաշտային Ալպերի հետազոտությունը

Անտարկտիկայի ենթասառցադաշտային Ալպերի հայտնաբերումը տեղի է ունեցել դեռեւս 1958 թվականին, բայց դրանց լիարժեք ուսումնասիրել հնարավոր դարձավ միայն մինչեւ 2020 թվականը: Գամբուրցեւի լեռնաշղթան, որը թաքնված էր Անտարկտիդայի սառույցների տակ, քիչ հետազոտված էր մնացել հետազոտությունների իրականացման դժվարությունների պատճառով, բայց 21-րդ դարում տեխնոլոգիայի զարգացման հետ մեկտեղ միջազգային արշավախմբի գիտնականներին հաջողվեց ստեղծել այս լեռնազանգվածի մանրամասն քարտեզներ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված, ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Այսօր (խմբ.) Ազգային Ժողովում հյուրընկալել էի Սեւանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոցի աշակերտներին: Երիտասարդները շրջեցին Ազգային ժողովի շենքում, այցելեցին թանգարան եւ գրադարան, այնուհետեւ ունեցանք հաճելի եւ բովանդակալից զրույց՝ խոսեցինք կրթության կարեւորության, դրա բացերի եւ երիտասարդների քաղաքացիական ակտիվության մասին:

Օրվա առանձնահատուկ պահը նրանց այցն էր նիստերի դահլիճ:

Այսպիսի հանդիպումները խթանում են նոր սերունդների ներգրավվածությանը եւ ապահովում մեր երկրի ապագան՝ հիմնված կրթության, գիտելիքի եւ ազգային գիտակցության վրա»:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՓՈՇՈՒ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐՄԱՅԻՑ ԱՎԵԼԻ Է

«Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացրել է Երեւանում մթնոլորտային օդի որակը սեպտեմբերի 26-հոկտեմբերի 2-ը:

Փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան.

Կենտրոն վարչական շրջանում՝ սեպտեմբերի 26-30-ը,

Նոր Նորքում՝ սեպտեմբերի 28-ին եւ 29-ին, հոկտեմբերի 1-ին,

Արաբկիրում եւ Շենգավիթում չի գերազանցել:

Ազոտի երկօքսիդի պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան.

Կենտրոնում՝ սեպտեմբերի 26-ին,

Շենգավիթ վարչական շրջանում, Նոր Նորքում եւ Արաբկիրում՝ չի գերազանցել:

ՎԹԱՐՎԵԼ Է ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ՄՆՈՂ ՋՐԱՏԱՐԸ

Երեկ վթարվել է էջմիածնի տարածաշրջանը սնող 600 մմ-ոց ջրատարը՝ վայրկյանում 100 լիտր ջրի կորստով, հայտնում է «Վելոլիա ջուրը»:

««Էջմիածին» շահագործման տեղամասն արդեն վթարի վայրում է եւ սկսել է վթարավերացման աշխատանքները:

Դրանով պայմանավորված՝ հոկտեմբերի 4-ին ժամը 12:00-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը՝ ժամը 24:00-ն կդադարեցվի Արմավիրի մարզի՝ Էջմիածին քաղաքի, Արտիմետ, Արեւաշատ, Այգեշատ, Ամբերդ, Արշալույս, Աղավնատուն, Արագած, Արտամետ, Գեղակերտ, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Խորոնք, Ծաղկալանջ, Ծիածան, Ծաղկունք, Հայթաղ, Հովտամեջ, Մրգաստան, Մուսալեռ, Շահումյան, Ոսկեհատ, Պտղունք, Ֆերիկ, Շենիկ, Արեւադաշտ, Արգին գյուղերի ջրամատակարարումը», - նշված է հայտարարությունում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 19 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

12,5 ՏՈԿՈՍՈՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում հարկային մարմնի կողմից հավաքագրվել են շուրջ 1 տրլն 698.6 մլրդ դրամ եկամուտներ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է շուրջ 189.1 մլրդ դրամով կամ 12.5%-ով: Մաքսային մարմնի կողմից հավաքագրվել է շուրջ 312 մլրդ դրամ եկամուտ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից պակաս է շուրջ 60.8 մլրդ դրամով կամ 16.3%-ով:

Հարկ վճարողներին եւ ֆիզիկական անձանց պետական բյուջեի եկամուտներից վերադարձվել է շուրջ 243.4 մլրդ դրամ (ցուցանիշում ներառված չէ 49.6 մլրդ դրամ հիփոթեքի վերադարձը, որը չի նվազեցվել եկամտային հարկից), ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից պակաս է շուրջ 21.8 մլրդ դրամով կամ 8.2%-ով (2023թ. վերադարձի ցուցանիշում ներառված է 37.5 մլրդ դրամ հիփոթեքի վերադարձը):

Կոմիտեն հայտնում է, որ 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում հարկային եւ մաքսային մարմինների կողմից ընդհանուր հավաքագրվել է 2 տրլն 10.6 մլրդ դրամ, որից հարկ վճարողներին եւ ֆիզիկական անձանց վերադարձվել է 243.4 մլրդ դրամ: Արդյունքում հարկային եկամուտների եւ պետական տուրքերի գծով փաստացի կատարողականը կազմել է 1 տրլն 767.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 150.2 մլրդ դրամով կամ 9.3%-ով:

ԱՄԵՆԱԱՐԱԳ ԱՃԸ

Պարենի համաշխարհային գները սեպտեմբերին աճել են ամենաարագ տեմպերով վերջին 18 ամիսների ընթացքում: ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (FAO) գների ինդեքսը, որը հետեւում է պարենային որոշ ապրանքների միջազգային գների ամսական փոփոխություններին, սեպտեմբերին կազմել է 124,4, ինչը 3%-ով ավելի է օգոստոսի համեմատ եւ 2,1%-ով ավելի, քան մեկ տարի առաջ:

Ինչպես նշվում է կազմակերպության հաղորդագրության մեջ, հիմնական պարենային ապրանքների գների աճը պայմանավորված է շաքարավազի միջազգային գների աճով՝ 10,4%-ով: Հացահատիկի գների ինդեքսն աճել է 3%-ով: Դրան նպաստել է ցորենի եւ եգիպտացորենի արտահանման գների աճը: FAO-ն բացատրում է, որ ցորենի միջազգային գները հիմնականում բարձրացել են Կանադայում եւ ԵՄ-ում չափազանց խոնավ եղանակային պայմանների՝ բերքի վրա բացասական ազդեցության հետ կապված, թեեւ դա մասամբ փոխհատուցվել է սեւծովյան տարածաշրջանի մրցունակ գներով:

Գների ինդեքսն աճել է նաեւ բուսական յուղի՝ 4,6%, կաթնամթերքի՝ 3,8% եւ մսի՝ 0,4% ապրանքախմբերում:

ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ՋԵՅՍՈՆ ԴԵՐՈՒԼՈՆ

Fastex-Ը ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ Է WCIT-Ի ԲԱՑՄԱՆ ՀԱՄԵՐԳԸ

Մայն թվականի հոկտեմբերի 3-ին Իսահակյան 9 հասցեում կայացել է Fastex-ի եւ WCIT նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսի համատեղ մամուլի ասուլիսը: «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խումբը՝ Fastex-ի եւ Fast Bank-ի հեռ համատեղ, WCIT-ի գլխավոր գործընկերներն են:

Ասուլիսին մասնակցել են Fastex-ի տնօրենների խորհրդի անդամ Վահագն Բադալյանը եւ Fastex-ի գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը:

Վահագն Բադալյանը, անդրադառնալով տարածաշրջանում այս կարեւոր միջոցառումը հովանավորելու Fastex-ի նախաձեռնությանը, նշել է. «Կարեւորում ենք ինովացիաների եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնֆերանսի՝ WCIT 25-րդ հոբելյանական միջոցառման անցկացումը Հայաստանում: Սա հիանալի հնարավորություն է Հայաստանը դիրքավորել որպես տարածաշրջանի տեխնոլոգիական կենտրոն եւ մեր երկիրը դարձնել առավել մրցունակ միջազգային հարթակներում: Այս տարի մենք ստանձնել ենք միջոցառման բացման արարողությունը կազմակերպելու կարեւոր գործը»,- ասել է նա:

Միջոցառման պաշտոնական բացումը կկայանա հոկտեմբերի 4-ին Հանրապետության հրապարակում: Hoory AI օգնականն այս տարի կլինի միջոցառման հաղորդավարի դերում՝ ներկայացնելով երեկոյի մասնակիցներին: Ելութները կուղեկցվեն արհեստական բանականության կողմից գեներացված վիզուալ պատկերներով: Ի դեպ, այս տարի համաժողովի հիմնական թեման արհեստական բանականությունն ու դրա ընձեռած լայն հնարավորություններն են: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը կազդարարի միջոցառման մեկնարկը՝ ներկայանալով առցանց ռեժիմում արհեստական բանականության կողմից ինտեգրված երաժշտությամբ: Երեկոյի ավարտին շքեղ երաժշտական շոուով հանդես կգա համաշխարհային աստղ Ջեյսոն Դերուլոն:

«Ուրախ ենք երկրորդ անգամ Հայաստանում հյուրընկալել WCIT կոնգրեսը: Այս տարի համաժողովի բացմանը տեսակապով ողջույնի խոսքով հանդես կգա գործարար, SpaceX, Tesla եւ X ընկերությունների ղեկավար Իլոն Մասկը: 2019 թվականի համաժողովը հայաստանյան SS ոլորտում տեսանելի զարգացումներ է գրանցել, ինչը, վստահ եմ, որ այս տարի կրկնապատկվելու է: Շնորհակալ ենք նաեւ գործընկեր կազմակերպություններին, որոնք աջակցում են մեզ կազմակերպման գործում եւ կարեւորում նման միջոցառումների իրականացումը Հայաստանում»,- ասել է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) նախագահ Ալեքսանդր Եսայանը:

Հոկտեմբերի 5-7-ը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացվի համաժողով. կլինեն տեխնոլոգիական նորարարությունների վերաբերյալ քննարկումներ, որոնց ընթացքում համաշխարհային բիզնեսի առաջնորդները եւ ոլորտի փորձագետները կանդրադառնան բիզնես հնարավորություններին ու զարգացող շուկաներին:

WCIT 2024-ի ամբողջական օրակարգն այստեղ է:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով

Fastex Exchange փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիջիթալ սփեյսներով: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ԲԱՆԿԱՅԻՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐ

Ֆասթ Բանկը հոկտեմբերի 4-7-ը «Մերիդիան» էքսպո կենտրոնում իր մասնակցությունն է ունենում DigiTec 2024 տեղեկատվական տեխնոլոգիաների ցուցահանդեսին որպես ֆինտեք հովանավոր: Այս տարի «Ֆասթ» Բանկը հանդես է գալիս «Բացահայտի՛ր աշխարհը մեր աչքերով» խորագրի ներքո եւ այցելուներին ներկայացնելու է իր թվային նորարարական պրոդուկտները:

Ֆասթ Բանկի տաղավարի բացումն ազդարարվել է առանձնահատուկ ներկայացումով՝ ոգեշնչված նոր թողարկված ԱԿՆ-քարտերի մտահղացմամբ: Այցելուները կարող են տեղում հայտ լրացնել օրերս թողարկված նոր ԱԿՆքարտեր ձեռք բերելու համար: DigiTec 2024 չորսօրյա ցուցահանդեսին ընդառաջ՝ Բանկն իր տաղավար այցելած եւ հավելվածը ներբեռնած օգտատերերին անվճար տրամադրելու է Վիզա Գոլդ քարտեր:

Ֆասթ Բանկի տաղավարի այցելուներին ներկայացվելու է նաեւ ֆինանսաբանկային ոլորտում առաջին եւ եզակի՝ Temp անգրավ բիզնես վարկը, որը տրամադրվում է առանց բիզնեսի վայր այցելության՝ օնլայն հարցաշարի լրացման արդյունքների հիման վրա: Ցուցահանդեսի մասնակիցներին հնարավորություն է ընձեռվելու տեղում դիմել օնլայն բիզնես վարկի եւ անմիջապես ստանալ պատասխանը:

Ֆասթ Բանկը նաեւ ստեղծել է առաջին՝ հայերեն խոսքը տեքստի վերածող StT (Speech to text) մոդելը, որը ձեւավորվել է Բանկի կողմից մշակված «Խոսափող» հավելվածի տվյալների շտեմարանի հիմքի վրա: Ընդգծենք, որ StT մոդելն աշխատում է մեքենայական ուսուցման՝ ML ալգորիթմով: Ցուցահանդեսի այցելուները հնարավորություն ունեն տեղում փորձարկելու մոդելը եւ տեսնելու դրա հնարավորությունները:

«Ֆասթ» բանկի տաղավարի այցելուները կարող են զեղչեր ձեռք բերել Բանկում գործող, տարածաշրջանում եզակի, ամբողջությամբ ռոբոտացված պահատուփերի ծառայությունից: Հավելենք, որ Ֆասթ Բանկի տաղավարում սպասվում են հետաքրքրաշարժ քուիզեր եւ անակնկալներ:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում եւ առաջին հայկական բանկն է, որն ունի գործող մասնաճյուղ Fastexverse վիրտուալ տարածքում: Ֆասթ բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

10% idcoin IDBank-Ի Mastercard ՔԱՐՏԵՐՈՎ

IDBank-ի Mastercard քարտերով անկանխիկ գնումներ կատարելն ավելի շահավետ է, քան երբեւէ: Բանկը հայտարարում է նոր՝ «Shopping» արշավի մասին:

Եվ այսպես, արշավի շրջանակներում 03.10.2024թ-ից 31.12.2024թ.-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Mastercard Standard կամ Mastercard Gold տեսակի քարտերով գնումներ կատարելու դեպքում կստանաք 10% idձoin՝ ստորեւ նշված կայքերից գնումներ կատարելու

դեպքում եւ 1% idcoin բոլոր միջազգային վճարային գործարքների համար. Amazon

Aliexpress

Temu

Pinduoduo

Shein

Ստացված idcoin-ները կարող եք օգտագործել՝ կատարելով վճարումներ բոլոր այն վաճառակետերում, ուր կա Idraշ QR:

Ի դեպ, արշավի ընթացքում Idram&IDBank հավելվածի միջոցով պատվիրված Mastercard Standard եւ Mastercard Gold տեսակի քարտերը կարող եք ձեռք բերել հետեւյալ պայմաններով՝

Mastercard Standard՝ առաջին տարին անվճար,

Mastercard Gold՝ առաջին տարին 70% զեղչված արժեքով:

Արշավի մասին բոլոր մանրամասներին կարող եք ծանոթանալ կանոններում՝ անցնելով հղումով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ

ՄԵԿԸ ԲՈԼՈՐԻ, ԲՈԼՈՐԸ՝ ՄԵԿԻ ՀԱՄԱՐ...

Մեկը բոլորի, բոլորը՝ մեկի համար... ահա այս գաղափարի շուրջ է ծնվել «Դեպի ճամբար-հատուկ ջոկատ» գեղարվեստական ֆիլմը:

Երեկ՝ հոկտեմբերի 3-ին, Մոսկվա կինոթատրոնում տեղի ունեցավ ֆիլմի պրեմիերան, որի հիմքում ընկած է ընկերության, հավատարմության եւ համերաշխության բարձր գաղափարը:

Ֆիլմի պրոդյուսեր, սցենարիստ Գրիգոր Դանիելյանը, որը նաեւ գլխավոր դերակատարներից է, խոսելով ֆիլմի ստեղծման գաղափարի մասին, նշեց, որ «Դեպի ճամբար» հեռուստասերիալը, որը դեռ 2019թ-ից հեռուստաէկրաններին է, շատ էր սիրվել հանրության կողմից, ուստի որոշեցին նույն դերասանական կազմով, բայց սերիալից գաղափարապես տարբերող գեղարվեստական ֆիլմ ստեղծել:

«Ֆիլմը սերիալից կտրել ենք, մեզ համար կարեւոր էր, որ մարդկանց մոտ նայելիս հարցեր չառաջանան, իրենք տեսնեն 0-ից նոր ֆիլմ: Պարտադիր չէ կերպարներին ճանաչեն»,- ասաց Գրիգոր Դանիելյանը:

Ֆիլմի տնօրեն Հռիփսիմե Ելինյանը, որը նույնպես մասնակցություն ունի ֆիմում, պատմում է՝ սերիալի նկարահանումները շատ բարդ են անցել՝ առավոտյան 8-ից նկարահանումները սկսվում էին ու տեւում մինչեւ գիշերը 12-ը: «Գալիս, ասում էին, ուռա՛, այսօր 2 րոպե նկարեցինք: Ես վատանում էի, ասում էի՝ ո՞նց, 2 րոպե՞... այդքան բարդ ու դաժան էր»,- ասաց Ելինյանը:

Ֆիլմի գլխավոր դերակատարներից Մարիամ Ալեքսանյանն էլ, խոսելով ֆիլմի անձնակազմի մասին, նշեց, որ իրեն մշտապես ջերմ են ընդունել եւ վերջում կատակեց՝ եթե ընտանիքի անդամների հետ վիճում էր, գիտեր՝ ուր գնա:

Ֆիլմի մյուս սցենարիստ Գարիկ Սեփխանյանն էլ, ով նույնպես դերակատարներից է, անկեղծացավ, որ սցենարը գրելիս չէր պատկերացնում, որ էկրանավորելն այդքան բարդ կլինի:

Ասուլիսի ժամանակ Ar2Lur.a2-ը հարց հնչեցրեց դերասանական կազմին, թե որոնք են եղել ամենաածիծաղելի դեպքերը նկարահանման ընթացքում, որոնք կադրից դուրս են մնացել:

«Ծիծաղելի չէ, բայց վտանգավոր դեպքեր եղել են»,- ասաց Գարիկ Սեփխանյանը:

Ասուլիսից հետո Մոսկվա կինոթատրոնի բակում տեղի ունեցավ կարմիր գորգի արարողությունը, որի հայտնի հյուրերն էին՝ Գարիկ Պապոյանը եւ իր կինը, Արփի Գաբրիելյանը եւ Միհրան Ծառուկյանը, Մարջան Ավետիսյանը, Դիանա Շատվերյանը, Աննա Մաքսիմը, Տոման եւ Տարոն Իսպիրյանը (Պոնչ) եւ այլք:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ,
ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ,
ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ԼԵԳԵՆԴԸ

«Ժողովուրդ» օրաթերթը մեծանուն դերասան Արմեն Ջիգարխանյանի ծննդյան օրվա առթիվ ներկայացնում է նրա 5 ամենահետաքրքիր մտքերը:

Նրա հայտնի մտքերից կարելի է առանձնացնել հետեւյալները.

1.«Սեր ու արվեստ»՝ Ջիգարխանյանը հավատում էր, որ արվեստը անխուսափելիորեն կապված է սիրո եւ մարդկային հարաբերությունների հետ: Նա համոզված էր, որ բոլոր ստեղծագործությունները հիմնված են մարդկային զգացմունքների վրա:

2.«Պատասխանատվությունը արվեստում»՝Նա միշտ շեշտում էր, որ դերասանը պետք է զգա իր պատասխանատվությունը հասարակության առաջ եւ պետք է լինի օրինակ:

3.«Թատրոնի ուժը»՝ Ջիգարխանյանը կարծում էր, որ թատրոնը կարող է լինել հասարակական փոփոխությունների պլատֆորմ եւ կարող է ազդել մարդկանց մտադրությունների վրա:

4.«Սովորելու պրոցեսը»՝ Արվեստը վերջի սկզբունք չէ, այլ մշտական գործընթաց» - նա հավատում էր, որ մարդը պետք է միշտ սովորի, կատարելագործվի ու ձգտի նորանոր գիտելիքների:

5.«Մարդկային արժեքները»՝Նա մշտապես ընդգծում էր, որ մարդկային բարոյական արժեքները ամենակարեւորն են կյանքում, եւ դրանք պետք է լինի յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործության հիմքը:

Այս մտքերը Ջիգարխանյանի հոգեբանության ու ստեղծագործական մոտեցման մեջ արմատավորված են, եւ նրանք էլ մշտապես մնացել են նրա արվեստի հենքը:

ԱՅՍՈՒՀԵՏ՝ «ԿԻՆՈՄՈՍԿՎԱ»

Օրերստեղի է ունեցել «Մոսկվա» կինոթատրոնի վերաբացման հանդիսավոր արարողությունը եւ տարվա ամենասպասված ֆիլմերից մեկի՝ «Ջոկեր: Խելագարություն երկուսի համար» ֆիլմի տարածաշրջանային եզակի փակ նախադիտումը

Ցուցադրությանը նախորդել է երաժշտական ծրագիր եւ հատուկ ֆիլմ՝ նվիրված «Մոսկվա» կինոթատրոնի վերաբացմանը:

«Մոսկվա» կինոթատրոնի տնօրինությունն այս տարի նախաձեռնել եւ իրականացրել է Երեւանի խորհրդանիշերից մեկը հանդիսացող կինոթատրոնի ներքին հարդարման աշխատանքները՝ գրկաբաց ընդունելու մեր քաղաքի բնակիչներին ու հյուրերին՝համաշխարհային ու տեղական կինոարտադրության ֆիլմերի դիտումն ու ժամանցը միջազգային բարձր չափանիշներով կազմակերպելու համար: Հիմնանորոգվել են բոլոր սրահները, համալրվել գերժամանակակից տեսալսողական սարքերով ու կահավորանքով: Թարմացվել է օդափոխության եւ ջեռուցման համակարգը, հիմնովին բարեկարգվել են սանհանգույցները: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով «Մոսկվա» կինոթատրոնի շենքի պատմամշակութային արժեքը, արտաքին հարդարման եւ մաքրման աշխատանքների ժամանակ խստիվ պահպանվել է հուշարձանի ինքնատիպությունը:

Տեխնիկական վերազինմամբ նորացվել են կինոթատրոնի թ՛ւ ձայնային տեխնիկան, թ՛ւ էկրանները:

Նյութերը՝ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐԻ ԼԻԳԱ

Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում Երեւանի «Նոա» ֆուտբոլային ակումբն անցկացրեց Կոնֆերենցիաների լիգայի խաղարկության հիմնական փուլի առաջին հանդիպումը չեխական «Մլադա Բոլեսլավ»-ի հետ: Խաղն ավարտվեց 2:0՝ հօգուտ «Նոա» ակումբի:

ՄԻՇՏ ԿԱՐՈՂԱՑԵԼ Է ԵԼՔ ԳՏՆԵԼ

Մադրիդի «Ռեալի» նախկին կիսպաշտպան Տոնի Կրոսը կարծում է, որ մադրիդյան ակումբը միշտ կարողանում է ելք գտնել կարեւոր խաղացողներին կորցնելուց հետո:

««Ռեալը» կարողացավ ելք գտնել, երբ Կրիշտիանուն հեռացավ, երբ հեռացավ Ռամոսը: Նրանք միշտ կարողանում են ելք գտնել եւ շարժվել առաջ: Մենք առանց նրանց երկու անգամ հաղթեցինք Չեմպիոնների լիգայում, չնայած նրանք շատ կարեւոր էին եւ բացարձակ լեգենդներ են: Նույնը կլինի իմ պարագայում»,- Կրոսի խոսքերն է մեջբերում Madrid Xtra-ն:

Գերմանացի կիսապաշտպանը Մադրիդի «Ռեալում» հանդես է եկել 2014-ից 2024 թվականներին: Այդ ընթացքում նա բոլոր մրցաշարերում անցկացրել է 465 հանդիպում, որոնցում դարձել է 28 գոլի եւ 99 գոլային փոխանցման հեղինակ:

ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐԴՅՈՒՔՆԵՐ

Լոնդոնի «Չելսին» վերջին հանդիպումներում տպավորիչ արդյուքներ է գրանցում:

Այս անգամ էնցո Մարեսկիի թիմը Կոնֆերենցիաների լիգայում հաղթեց բելգիական «Գենտին»՝ 4:2: Սա «Ազնվականների» 5-րդ անընդմեջ հաղթանակն էր բոլոր մրցաշարերում:

Շարքը սկսվեց սեպտեմբերի կեսերին, երբ նրանք հաղթեցին «Բորնմութին» (1:0): Հաջորդ 4 հանդիպումներում «Չելսին» ոչ միայն հաղթում էր, այլեւ շատ գոլեր էր խփում մրցակիցներին՝ընդհանուր 16 գոլ:

Լոնդոնցիները այս ճանապարհին պարտության մատնեցին «Վեսթ Հեմին» (3:0), «Բարոուին» (5:0) եւ «Բրայթոնին» (4:2):

Հիշեցնենք, որ էնցո Մարեսկան գլխավորել է «Չելսին» ընթացիկ մրցաշրջանի մեկնարկից առաջ: Պրեմիեր լիգայի 6 տուրից հետո թիմը 13 միավորով զբաղեցնում է մրցաշարային աղյուսակի 4-րդ տեղը:

● Հոկտեմբերի 12-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2.000-4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալ:

Աստղիկ Կիրակոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարանի աշխատակազմ կամ նախարարություն, իսկ հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները եւ օտարերկրացիները՝ կենտրոնական մարմին: Հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացին եւ օտարերկրացին կարող են ծանոթանալ երեխաների անձնական գործերին նախընտրելի չափանիշներով երեխա ընտրելու համար: Տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային որդեգրելուց հրաժարվելու դեպքում որդեգրել ցանկացող անձը հաշվառումից չի հանվում:

Այն դեպքերում, երբ երեխային որդեգրելու ցանկություն է հայտնել ՀՀ սահմաններից դուրս բնակվող երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները, կամ երբ երեխայի ծնողների եւ որդեգրել ցանկացող անձի միջեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է գրավոր համաձայնություն, որդեգրման նպատակով երեխայի կենտրոնացված հաշվառումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը կենտրոնական մարմին է ուղարկում տվյալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը: Այդ դեպքերում որդեգրման ենթակա երեխայի տվյալներն այլ անձանց չեն տրամադրվում:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որդեգրել ցանկացող անձի կողմից տվյալ երեխայի որդեգրումից հրաժարվելու դեպքում երեխան հանվում է հաշվառումից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. ՀՀ մշտական բնակության ժամանող անձի անձնական ավտոմեքենան առանց մաքսատուրքի վճարման ՀՀ ներմուծելու համար ավտոմեքենայի համար ի՞նչ պահանջներ են սահմանվում:

Գեւորգ Հունանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ նրա լիազորած անձի կամ նրա հանձնարարությամբ եւ անունից հանդես եկող մաքսային ներկայացուցչի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մայրաքաղաքում՝ Ազատության հրապարակում, արդեն 5-րդ օրն է ընթանում է գիտության շաբաթը: Նախագիծը իր բազմաթիվ միջոցառումներով փորձում է մոտեցնել գիտությունն ու հասարակությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +15 + 20
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +14 + 19
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +17 + 20
Գեղարքունիք	+ 4 + 8 +14 + 17
Լոռի	+ 6 + 10 +16 + 19
Տավուշ	+ 8 + 13 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +18 + 20

Արարատ	+ 13 + 15 +19 + 22
Արմավիր	+ 12 + 14 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +15 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +16 + 18
ԼՂՀ	+ 8 + 10 +15 + 18
Երեւան	+11 + 14 + 15 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*